



Լիբանանեան Լուրեր

Կառավարութիւնը Վերահաստատեց «Դրամագլուխի Վերահսկողութեան» Նախագիծը «Ոչ Հիմնական Փոփոխութիւններով»



Լիբանանի կառավարութիւնը, երէկ Պաապտայի պալատին մէջ կայացած իր նիստին ընթացքին համաձայնեցաւ «Դրամագլուխի վերահսկողութիւն» օրինագիծը որոշ բարեփոխումներով հաստատել եւ ուղարկել զայն խորհրդարան:

Նախարարաց խորհուրդը գումարուած էր նաեւ պարենային անվտանգութեան եւ ֆինանսատնտեսական իրավիճակը քննարկելու, նախագահ Միշէլ Աունի գլխավորութեամբ Վարչապետ Նաժիպ Միքաթիի եւ նախարարներուն ներկայութեամբ: Անոնք քննարկեցին 29 կետերէ բաղկացած օրակարգ՝ Կեդրոնական Դրամատան կառավարիչին բացակայութեամբ, որ նախօրոք հրաւիրուած էր մասնակցելու նիստին:

Միջազգային Լուրեր

ԱՄՆ Զոնկրեսականները Պետական Բաժանմունքին Կոչ Ըրած են Միջոցներ Ձեռնարկելու Ալիէի Ռազմատենչ Գործողութիւններուն Դէմ

ԱՄՆ Զոնկրեսի հայկական հարցերով յանձնախումբի համանախագահները Պետական բաժանմունքին կոչ ըրած են օգտագործելու իրենց ձեռքի տակ եղած դիւանագիտական բոլոր գործիքները՝ Ազրայէճանի նախագահի ռազմատենչ գործողութիւնները դադրեցնելու, զինք բանակցութիւններու սեղանի շուրջ վերադարձնելու համար: Այս մասին կը հաղորդէ 168.am-ը:



Զոնկրեսի հայկական հարցերով յանձնախումբի համանախագահներ Ֆրենք Փայլոնը, Կաս Պիլիրագիսը, Ճէքի Սփէյըրը, Տէյլիտ Վալատաոն եւ Ադամ Շիֆը Լեռնային Ղարաբաղի մէջ ազրայէճանական ստորաբաժանումներու ներխուժման առնչութեամբ յայտարարութեան մէջ մասնաւորապէս շեշտած են. «Մենք կը դատապարտենք Ազրայէճանի վերջին գործողութիւնները Լեռնային Ղարաբաղի մէջ»:

Զոնկրեսականները ընդգծած են, որ Ազրայէճանի զօրքերու տեղաշարժը դէպի Արցախի հող, անոնց կողմէ անօդայն թռչող սարքերու օգտագործումը եւ այդ տարածքին մէջ խաղաղ բնակիչներուն բնական կազմի հիմնական աղբիւրէն գրկելը 2020 թուականի հրադադարի խախտում է եւ սպառնալիք է անմեղ մարդոց համար:

«Միացեալ Նահանգները պետք չէ աչք փակել վտանգաւոր գործողութիւններու այս յստակ օրինակին վրայ, եւ մենք պետք է ամէն ինչ ընենք տարածաշրջանին մէջ խաղաղութիւն եւ կայունութիւն ապահովելու համար: Մենք կոչ կ'ընենք Պետական բաժանմունքին օգտագործելու իրենց ձեռքի տակ եղած դիւանագիտական բոլոր գործիքները՝ դադրեցնելու Ազրայէճանի նախագահ Ալիէի ռազմատենչ գործողութիւնները եւ զինք վերադարձնելու բանակցութիւններու սեղանի շուրջ՝ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահութեան խաղաղ գործընթացին միջոցով», - ըսուած է քոնկրեսականներու յայտարարութեան մէջ:

Հայկական Լուրեր

Արցախի Մէջ ԱԱԾ-ի Մէջ Մարտական Ստորաբաժանումներ Պիտի Ստեղծուին

Արցախի Ազգային Ժողովը այսօր՝ Մարտ 30-ի իր նիստին միաձայն կողմ քուէարկեց «ազգային անվտանգութեան մարմիններու մասին» օրէնքին մէջ փոփոխութիւններու նախագիծին: Այն ներկայացուց ԼԱԾ ներկայացուցիչ Նուր Գասպարեանը՝ նշելով. «Օրէնքի 3-րդ յօդուածը սահմանում է, որ Արցախի ազգային անվտանգութեան մարմինների համակարգը կազմուած է լիազօր մարմնից, նրան ենթակայ կեդրոնական, քաղաքային շրջանային կառուցուածքային ստորաբաժանումներից:



Օրէնքի փոփոխութիւններով առաջարկուում է օրէնքի 4-րդ յօդուածի 2-րդ մասում «ազգային անվտանգութեան մարմիններ» բառից յետոյ աւելացնել «եւ մարտական ստորաբաժանումներէ բառերը, իսկ 14-րդ յօդուածում «զօրքերի» բառից յետոյ աւելացնել «եւ լիազօրուած մարմնի համակարգում գործող մարտական ստորաբաժանումները» բառերը»:

Խրամորթէն Եւ Փառուխէն Տարհանուած Է 200 Կին, Տարեց Եւ Երեխայ

Զանի որ յաճախակի հարցումներով կը դիմեն կատարուող աշխատանքներու մասին, յայտնեմ, որ այս օրերուն տարբեր պետական մարմիններ իրենց աշխատանքը կը կատարեն իրավիճակէն բխող հիմնախնդիրներու կարգաւորման ուղղութեամբ: Ես քանիցս այցելած եմ Խրամորթ համայնք, կապ կը պահեն շրջանի վարչակազմերու ղեկավարներուն ու լիազօր նախարարներուն հետ, կու տամ համապատասխան յանձնարարականներ: Այս մասին կը յայտնէ Արցախի պետական նախարար Արտակ Բեկլարեանը: «Նախ, Խրամորթի ու Փառուխի բնակիչների (շուրջ 200 երեխայ, կին ու տարեց) տարհանման կազմակերպումից յետոյ յանձնարարել եմ սոցիալական զարգացման ու միգրացիայի նախարարութեանը արագօրէն գնահատել տարհանուած ընտանիքների կարիքները եւ ցուցաբերել առաջին անհրաժեշտութեան աջակցութիւն: Արդէն սննդամթերքի տեսքով որոշակի ծաւալի աջակցութիւն տրուել է եւ յառաջիկայում աջակցութեան լրացուցիչ միջոցներ եւս կը կիրառենք: Կառավարութեան հետ համագործակցութեամբ Կարմիր խաչի միջազգային կոմիտէն եւս ցուցաբերում է աջակցութիւն, այդ թւում՝ ֆինանսական բնոյթի, եւ, ըստ կարիքի, կառավարութիւնը նոյնպէս կտրամադրի ֆինանսական օգնութիւն տարհանուած անձանց՝ յաղթահարելու իրենց սուր հիմնախնդիրները:

Յանձնարարուած է լիազօր մարմիններին կարիքների գնահատման արդիւնքների հիման վրայ ապահովել Խրամորթից ու Փառուխից տարհանուած կարիքաւոր ընտանիքներին ժամանակաւոր կացարաններով՝ մինչեւ իրավիճակի կարգաւորումը եւ նրանց վերադարձը հայրենի տներ: Աշխատանքներ են տարուում նաեւ տարհանուած երեխաների կրթութեան պատշաճ կազմակերպման ուղղութեամբ:

Գիւղատնտեսութեան նախարարութիւնը միջոցներ է ձեռնարկում կենդանիների պաշտպանութեան ու անասնակերի ապահովման ուղղութեամբ: Մի շարք աշխատանքներ են կատարուել ու կատարուում նաեւ այլ ուղղութիւններով, այդ թւում՝ Հայրենիքի պաշտպանութեան գործին աջակցելու առումով, որոնց մասին լիազօր մարմինները առանձին հրապարակումներով հանդէս կը գան», կը յայտնէ Բեկլարեանը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի Ազգային Արխիվը՝ Մեկդարեայ Յոբելեանին Ընդառաջ

**«Իւրաքանչիւր ժողովրդի գիտակցական մակարդակը երեւում է նրանում, թե՛ նա ինչպէս է վերաբերում սեփական արխիվին»
Պ. ՍԵԻՎԱ**

Դարերու պատմութիւնն ու յիշողութիւնը իր մէջ կրող Հայաստանի Ազգային արխիվը կը դառնայ 100 տարեկան:

1923թ. Սեպտեմբեր 26-ի Հայկենտգործկոմի նախագահութեան որոշումով ստեղծուեցաւ Կենտգործկոմին առընթեր պետական կեդրոնական արխիվը: Իսկ 1924թ. Փետրուարին հաստատուեցաւ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան պետական կեդրոնական արխիվի կանոնադրութիւնը՝ արխիվային գործի վերաբերեալ առաջին օրէնսդրական ակտը:

ՀՍԽՍՀ Կենտգործկոմի քարտուղարութեան 1924թ. Մարտին նորաստեղծ արխիվի վարիչ նշանակուեցաւ փրոֆ. Խաչիկ Սամուէլեանը, որուն ղեկավարութեամբ հանրապետութեան առաջին արխիվագետները ձեռնամուխ եղան շէնքերու նկուղներուն, սենեակներուն եւ այլ վայրերու մէջ սփռուած անմշակ արխիվային նիւթերու յայտնաբերման եւ պետական կեդրոնական արխիվին մէջ անոնց հաշուառման եւ մշակման գործին: Այսպիսով, մեր ժողովուրդի մշակութային կեանքի ոլորտներէն մէկուն՝ արխիվներու հաւաքագրման, հաշուառման, պահպանման եւ օգտագործման գործը դրուեցաւ պետական հիմքերու վրայ:

1980թ. որոշում ընդունուեցաւ նաեւ երեւան քաղաքի պետական արխիվ ստեղծելու մասին, որ սկսաւ գործել յաջորդ տարուան սկիզբը: Նոյն թուականին, ոլորտի հետ կապուած շինարարական աշխատանքներու իրականացումով, ի յայտ եկան արխիվային նոր կառոյցներ, ինչպէս նաեւ բարեկարգուեցան հիւները: Արխիվային պարբերական ունենալու հարցը պետական ու գերատեսչական արխիվներու լայն ցանց ստեղծած Հայաստանի համար հասունցած էր դեռ 1940-ական թուականներուն, որ իրականութիւն դարձաւ 1950-ականի կեսերուն: Արխիվային առաջին պարբերականի՝ «գիտաինֆորմացիոն բիւլետենի» անդրանիկ համարը լոյս տեսաւ 1956 թուականին, վերջին՝ 21-րդ



համարը՝ 1962-ին, երբ արդէն 3-րդ տարին էր, որ զուգահեռաբար սկսած էր լոյս տեսնել «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդէսը: Մինչ օրս հրապարակուած է հանդէսի 131 համար:

Խորհրդային Միութեան փլուզումէն ետք՝ նորանկախ պետութիւններու համագործակցութեան (ԱՊՀ) մասնակից երկիրներուն միջեւ ստեղծուած նոր փոխարարբերութիւնները դրական անդրադարձան արխիվային գործին մէջ միջազգային համագործակցութեան հաստատման ու զարգացման վրայ: Ատիկա կը վկայեն 1990-ական թուականներու կեսերէն սկսեալ տարբեր երկիրներու արխիվային հաստատութիւններու մակարդակով համատեղ խորհրդակցութիւններու, գիտաժողովներու, այլ միջոցառումներու իրականացումը:

Հայաստանի Ազգային արխիվը աշխուժօրէն ներգրաւուած է ԱՊՀ մասնակից երկիրներու եւ միջազգային կառոյցներու հետ համագործակցութեան. 1994 թ. կը հանդիսանայ Արխիվներու միջազգային խորհուրդի (ԱՄԽ) անդամ, յետագային նաեւ վերջինիս Եւրասիական բաժանմունքի («Եւրագիկա») անդամ, իսկ 2004 թ.՝ ԱՊՀ երկիրներու պետական արխիվային ծառայութիւններու ղեկավարներու խորհրդատուական խորհուրդի անդամ:

Հայաստանի Ազգային արխիվը զարգացման նոր փուլ թեւակոխեց նորընտիր տնօրէն, պատմական գիտութիւններու դոկտոր Գրիգոր Արշակեանի նշանակումով, որ որդեգրած է նախապէս ձեռք բերուած աւանդոյթներու շարունակականութեան քաղաքականութիւնը՝ զայն հարստացնելով ժամանակակից տարբեր գործիքակազմերով, վերջնապատակ ունենալով Արխիվը դարձնել ազգային մակնիշ:

Հայաստանի Ազգային արխիվը գերատեսչական համագործակցութիւն կ'իրականացնէ շարք մը երկիրներու՝ ՌԴ, Պիեղառուսիոյ, Լեհաստանի, Վրաստանի, Ֆրանսայի, Ուքրաինայի, Իրանի, Պոլկա-

րիոյ, Սերպիոյ, Մոլտովայի, Ղազախստանի արխիվային ծառայութիւններուն հետ, ինչպէս նաեւ՝ սփիւռքեան համահայկական խոշոր կառոյցներու, գիտակրթական, բարեգործական կազմակերպութիւններու, սփիւռքի յայտնի անհատներու հետ. ձեռք կը բերուին փոխշահաւետ համաձայնութիւններ:

Հանդիպումներու ընթացքին Հայաստանի Ազգային արխիվին համար իբրեւ առաջնահերթութիւն կարելոր համարուած են Արխիվ արդիականացման՝ թուայնացման, ժամանակակից սարքերով վերագիւման հարցերը, ինչպէս նաեւ գիտահետազոտական աշխատանքներու կարելորութիւնն ու առանձնայատկութիւնը՝ որպէս հայ ինքնութեան պահպանման ու սերունդներուն փոխանցման առանցքային օղակ:

Ներկայիս հայ արխիվագետներու կողմէ աշխատանքներ կը տարուին սփիւռքի մեր հայրենակիցներուն հետ ստեղծագործական կապերու եւ համագործակցութեան զարգացման ուղղութեամբ, խորապէս համոզուած ըլլալով, որ հնարաւոր ու փոխշահեկան է համատեղ իրականացնել փաստաթուղթերու, ժողովածուներու կազմման, գիտական ուսումնասիրութիւններու իրագործման, ցուցահանդէսներու կազմակերպման եւ ազգօգուտ այլ աշխատանքներ՝ հիմք ունենալով Հայաստանի Ազգային արխիվին մէջ յաւերժ հանգրուանած փաստաթղթային տեղեկատուութեան հարուստ պաշարները:

Վերջին շրջանին բարեկարգուած են Հայաստանի Ազգային արխիվի շէնքային պայմանները, ձեռք բերուած են պատճենահանման նոր սարքեր, պատրաստուած են փաստաթուղթերու ժողովածուներ, մենագրութիւններ, ցուցադրութիւններ, համալրուած են եւ կը համալրուին Հայաստանի Ազգային արխիվի ֆոնտերը, զգալիօրէն նորացուած են սարքերը:

Շար. Էջ 05

Բամ բաս բայ



Կ'ըսուի թէ յառաջիկայ 15 Մայիսի Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններուն համար, «Պէյրութ Առաջին» ընտրաշրջանի 8 աթոռներէն՝ 6ին տիրացողներուն անունները, արդէն իսկ որոշակի յստակ են:

Կը մնայ մէկ Հայ առաքելական եւ մէկ՝ փոքրամասնութիւններու յատկացուած աթոռ, որոնց տիրացողներուն անուններն է, որ պիտի հաստատէ ընտրութիւններուն արդիւնքներուն պաշտօնական հրապարակումը:



Պատմութեան Մէջ Այսօր

Չաւէն Կիրակոսեան

Չաւէն Թադեւոսի Կիրակոսեան ծնած է (31 Մարտ 1936, Գահիրէ), ֆիզիքոս, ֆիզիքամաթեմատիկական գիտութիւններու դոկտոր (1962):

1956 թուականին աւարտած է Զալիֆորնիոյ Պըրքլէյի համալսարանը: 1956-1962 թթ. աշխատած է Նոյն համալսարանին մէջ, 1963-1970 թթ.՝ Ստանֆորտի համալսարանի գծային արագացուցիչի կեդրոնին մէջ, 1970-1978 թթ.՝ Նոյն համալսարանի բարձր էներգիաներու ֆիզիքային եւ միջրոալիքային ճառագայթման տարրալուծարանին մէջ: 1979-1994 թթ.՝ ԱՄՆ-ի ՊՆ աւիատիեզերական ընկերութեան պաշտպանական արհեստագիտութեան մշակումներու տնօրէն, 2005 թուականէն՝ ՀՀ մէջ իր հիմնադրած գիտաարտադրական խորհուրդի նախագահ:

Աշխատանքները կը վերաբերին տարրական մասնիկներու յայտնաբերման, բարձր էներգիաներէ ֆիզիկայի գերզգայուն սարքաւորումներէ եւ սարքերէ, պաշտպանական արհեստագիտութիւններէ (հեռահաս գերիզօր լազերներ, միջրոալիք հզօր ճառագայթիչներ) մշակման, խիտ փորթոնային եւ ելեկտրոնային արագացուցիչներէ, միջուկային էներկետիք աղբիւրներէ ստացման, ռադիօակտիվ թափօններու եւ աշխատած միջուկային վառելիքի մշակման հարցերուն:

Նամակ Ամերիկայեն – 21 –

Քաղաքական Թնճուկներ Կարելի ՉԷ ՉԵՆՔԻ ՈՒԺՈՎ ԼՈՒԾԵԼ ՌՈՒՍ-ՈՒԼՔՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԳՎ

ՆԵՐՍԵՍ ՊԱՊԱՅԵԱՆ

Անհամապատասխանության ծիրեն դուրս չեն մնար հետեւեալ զարգացումները՝ իբրեւ հետեւանք ռուսական բանակի Ուկրաինա արշաւանքին:

Առաջին. Դիւանագիտական կապերու խզում կամ ամկախում՝ Մոսկուայի եւ Ուաշինգթոնի, ինչպէս նաեւ Մոսկուայի եւ արեւմտեան այլ երկիրներու միջեւ:



Երկրորդ. Ռուս-Ուկրաինական զինեալ բախումները կրնան ներգրաւել Ուկրաինայի սահմանակից այլ երկիրները, պատերազմը ընդլայնելով եւրոպական ցամաքամասին վրայ, մասնակցութեամբ այլ երկիրներու:

Երրորդ. Չինաստան, Ռուսիա, Իրան, Վենեսուէլա, Նիքարագուա եւ Գուայա Նոր առանցք մը կրնայ կազմուիլ, հակադրելու առաջադրութեամբ Միացեալ Նահանգներու հովանաւորութիւնը վայելող Արեւմտեան աշխարհը:

Չորրորդ. Նախագահ Փութինը ցարդ անսասան հեղինակութիւնն ու անբեկանելի իշխանութիւնը կրնայ իր անփառունակ վախճանին հասնիլ:

Թեւ Միացեալ Նահանգներուն նախագահ Ծօ Պայտըն ռուս-ուկրաինական պատերազմի նախօրեակին յարատեւօրէն կը նախատեսէր ռուսական նախաշարժակումը Ուկրաինայ վրայ եւ կ'ազդարարէր Փութինին հեռու մնալ նման «արկածախնդրութենէ» մը: Սակայն յետադարձ ակնարկով մը կարելի է համոզուիլ թէ Քրեմլինի ղեկավարը վճռած էր Զինեւի հետ իր տարակարծութիւնները պատերազմի դաշտին վրայ լուծել: Յատկապէս Ֆրանսայի նախագահ Մաքրոնն ու Գերմանիոյ վարչապետ Շոլց բազմաթիւ անգամներ անձնական շփումներով եւ հեռաձայնային երկար խօսակցութիւններու ընթացքին յամառօրէն փորձեցին նախագահ Փութինին համոզել, լքել Ուկրաինայ ղեմ գինուորական գործողութիւններ իրագործելու իր որոշումը: Ռուս ղեկավարը քաջածանօթ էր տնտեսական այն աղետալի հետեւանքներուն, որուն զոհ պիտի երթար Ռուսաստան, իբրեւ անդրադարձ Ուկրաինայ ղեմ շղթայագործութիւնը յարձակումի մը: Փութինը անկասկած կը գիտակցէր, թէ նման քայլ մը Ռուսաստանը պիտի կոզիացնէր արեւմտեան աշխարհէն, խզեր տասնամեակներէ ի վեր հմտօրէն մշակուող եւ զարգացող տնտեսական-քաղաքական կապերը եւրոպայի հետ: Աւելին, այս անխուսափելի կոզիացումը Ռուսաստանը պիտի նետէր Չինաստանի գիրկը:

Ռուս ղեկավարին համար յատկապէս մտահոգիչ երեւոյթ մըն է անկասկած ռուս հասարակութեան խոր վերապահութիւնը աղետալի եւ արիւնալի այս պատերազմին նկատմամբ:

«Որո՞նք ղեմ է այս պատերազմը» հարց կուտայ ռուս ժողովուրդը: Փութինն էր պաշտօնապէս յայտարարողը, պատերազմէն օր մը առաջ, մօտալուտ նախաշարժակումը արդարացնող իր ռուս ժողովուրդին ուղղուած կոչին մէջ թէ Ռուսիան եւ Ուկրաինան մէկ երկիր են, թէ ռուսերն եւ ուկրաինացիները միեւնոյն ժողովուրդն են, երկու ժողովուրդներն ալ կը գործածեն մէկ այլբեմնագիր, նոյն ակունքէն բխած են եւ Ուկրաինացի ժողովուրդին կէսէն աւելի կը պատկանի քրիստոնէական ուղղափառ վարդապետութեան, մնացեալ մասը, արեւմտեան Ուկրաինան՝ կաթոլիկ է:

Ռուսաստանի լայնածաւալ տարածքին վրայ, բողոքի ձայները աւելի ստուար կը դառնան օրէ օր: Դժուար պիտի ըլլայ զսպել ռուս ժողովուրդին՝ յատկապէս երիտասարդ եւ համալսարանական զանգուածներուն ընդվզումը: Ընտանեկան եւ ազգականական բազմաթիւ կապեր գոյութիւն ունին երկու ժողովուրդներուն միջեւ: Ռուս երիտասարդ եւ մասնաւորաբար զարգացած, ազատամիտ եւ նոյնքան հայրենասէր տարրը չի կրնար հաշտուիլ այն իրողութեան հետ, թէ իրենց հօգի երկիրը գինուորական հսկայ ուժով կը բռնաբարէ դրացի երկրի մը հողային անձեռնմխելիութիւնը:

Նախագահ Փութին անդրդուելի կը մնայ իր կեցուածքին մէջ: Իր գնահատումով արեւմուտքը անարդար գտնուած է Ռուսիոյ նկատմամբ՝ յատկապէս ցուրտ պատերազմի յաջորդող տարիներուն, երբ երկիրը կը փորձէր ինքզինք վերագտնել, իր տեղը փնտռել միջազգային թատերաբեմին վրայ:

Աւելին, խարխափումի այդ դժուար եւ անստոյգ շրջանին, Քրեմլինի

Հասցեատիրոջ Զիսսած Նամակ Մը

Յարութիւն Թորոսեանին

Սիրելի Բարեկամ, Ողջոյն
Մարդ արարածը հետաքրքրուող, մտածող, ելքի մը համար աշխատող կենդանի է վարկածներով լի:

Չեմ գիտեր թելեբաղիին կը հաւատա՞ս թէ չէ... մի քանի օր առաջ էր ըսի (մենախօսութիւնը հոս սովորական եղաւ քանի որ շուրջս անապատ դարձաւ քովի-տով եւ շրջանակի սահմանափակումով) մեր բարեկամը արդեօք Լիբանա՞ն է տակաւին, թէ՛ Ֆրանսա... Եւ ահա նամակդ անակնկալի պէս Ծնունդի նախօրեակին. խորհուրդներով, ջերմութեամբ, քաջալերանքով, բարեկամական մտերմիկ շունչով անցեալը վերակոչող որոնց կարօտը ունիմ գալէս ի վեր: Հիմա այդ վերացական զգացական մեր հայրենասիրական ապրումները թաղուած են առանց յարութեան յոյսով: Ես այլեւս պայքարելու դաշտը չունիմ. Ինչ որ ըրի իզուր ելան ամբողջովին: Ես Հայաստան անունը կնքեցի Վայաստան: Զմեռը՝ սառցարան, ամառը՝ վառարան, ժողովուրդը՝ Խառնարան, մանաւանդ՝ քաղաքական գետնի վրայ: Եղբայր, ֆրանսացիները պիտի ըսէին ՍԷ ԹՐՕ (այս շա՛տ է): Թշնամին կ'առեւանգէ, կը սպանէ, հողդ կը յափշտակէ կը գերեզմարէ, իսկ այսպէս կոչուած ԸՆՏՐԵԱԼՆԵՐԸ՝ Ազգային ժողովի մէջ շիջեամարտ կը խաղան, կոփամարտ կը սարքեն իրար կը նուաստացնեն... Չէ, չէ շատ հեռու ենք Ազգ ըլլալէ ըստ իս անբուժելի է այս երկիրը: Մի վշտանար որ զաւակներդ, մեր զաւակները աշխարհի ամեն կողմի պիտի ձուլուին ՆԵՐԱՌԵԱԼ՝ ՎԱՅԱՍՏԱՆԻ: Մօտ է, միջանկ տասնեակ տարի հայրենի իշխանութիւնները, իրենց գործելաձեւով, Հայաստանին ողնայարը կտորեցին:



Որքա՞ն կ'ուզէի այս Ծնունդի Օրով եւ մանաւանդ՝ այս առաջին նամակիդ առիթով յուսատու եւ քաջալերական խօսքերով դիմաւորել Զեզ իբրեւ Բարեկամ, Սրտակից, եւ Հայ...բայց չկարողացայ իրականութիւնէն խուսափիլ: Ի միջի այլոց ԶՈՎԻՏ ըսուածէն ազատեցայ շնորհիւ հիւանդանոցային խնամքի որ տեւեց երկու շաբաթ թեւեւ երկու ամիս անցաւ սակայն ինքզինքս տկար կը զգամ: Պապաս պիտի ըսէր ՊՈՒՆԱ ՏԱ ՇԻՔԻԻՐ (ասոր ալ փառք)... ԲԹԱՅԱԾ ԵՍ թեւեւ այդքան ալ բան մը չէի ՊԻ ՍԱՐԱՅԱ (անկեղծօրէն): Կ'ուզէի անուշ խօսքերով աւարտել սա գրութիւնս, բայց ՕՐԵՐԸ ԿԸ ՀՐԱՄԱՅԵՆ: Բարեկամ Կիմային Չաւակներուդ եւ անոնց Պտուղներուն: Բարեկամ նաեւ՝ ՎՐԶԻՆԵՐՈՒԴ ԵՒ ՄԱՏԻՏԻՐ:

Սիրով՝ քոյր՝
ՍԱՐԳԻՍ ՓՈՇՕՂԵԱՆ

(Դժբախտաբար սոյն նամակս Իրեն հասնելէն առաջ արդէն Ինք հեռացեր է կեանքէն: Ցաւ մըն ալ այս է. երկարակեացութեան արդիւնքներէն մին ալ «Վերը աւելի Բարեկամ ունենալ է քան՝ Հոս...»):

Նորահաստատ ղեկավար աւագանին լուրջ կերպով կը հետապնդէր գոյակցիլ եւ համագործակցիլ արեւմուտքի հետ: Մոսկուայի կարծիքով սակայն արեւմուտքը ոչ միայն անտեսեց եւ արհամարհեց, մերժեցման բոլոր փորձերը, այլ խոցելի տեսնելով Ռուսիոյ գոյավիճակը յաջողեցաւ օգտուիլ առիթէն սահմանափակելով Ռուսիոյ ազդեցութեան գօտին: Երբ Ամերիկան ամիսներ ամբողջ ռմբակոծեց Եուկոսլաւիան, Ռուսիան շուքի մէջ նստաւ: Երբ մէկ եւ հօգի Եուկոսլաւիան եօթը երկիրներու վերածուեցաւ, օրինակ Ռուսիան միայն լուսանցքէն ափսոսանք արտայայտեց: Ռուս Ուկրաինական ներկայ պատերազմը ժայթքեցուց հակառուս միութեանը որ կուտակուած էր արեւմտեան կարգ մը պետական շրջաններու մօտ, տասնամեակներ ամբողջ: Ի՞նչ պատճառներ իրաւորեցին Քրեմլինի ղեկավարը այս քայլին դիմելու: Զինեւի իշխանութիւնները՝ յատկապէս 2014էն ետք, երբ Ռուսաստանը Խրիմի թերակղզիին «Մայր Ռուսիոյ» կցեց, անսպառ ճիգով կը փորձէին անդամակցիլ ՆԱՌՕ-ին: Ուաշինգթոնն ու Պրիւքսելը լաւապէս կը գիտակցէին թէ նման քայլի մը հաւանականութիւնը նոյնիսկ պիտի բռնկեցնէր Մոսկուան: Հետեւաբար, արեւմուտքը մէկ կողմէ հաւաստիացուց Զինեւին, թէ օր մը մաս պիտի կազմէ Ատլանտեան Ուխտին եւ զուգահեռաբար սկսաւ զինել եւ զինամթերք հայթայթել Ուկրաինայ:

Լիբանանահայ Դպրոց

Հայկազեան Համալսարանի Յատուկ Ընդունելութիւնը Հայ Կաթողիկէ Ս. Խաչ – Հարպոյեան Բարձրագոյն Վարժարանի Աւարտական Դասարաններու Աշակերտներուն

Վարժարանիս մեծաւոր պրն. Արամ Գարատաղեանի խնդրանքին ընդառաջելով, Հայկազեան Համալսարանը, երեքշաբթի 29 Մարտ 2022-ի առաւօտեան, յատուկ ընդունելութիւն մը կազմակերպեց Հայ Կաթողիկէ Սուրբ Խաչ - Հարպոյեան Բարձրագոյն Վարժարանի ակադեմական եւ արուեստից բաժիններու աւարտական դասարաններու աշակերտներուն համար:



36 աշակերտներ, ընկերակցութեամբ իրենց մեծաւորին, այցելեցին համալսարան, ուր դիմաւորուեցան Հայկազեան Համալսարանի նախագահ Վերապատուելի Դոկտ. Փոլ Հայտոսթեանի կողմէ, որ հանդէս եկաւ ողջոյնի խօսքով, եւ յայտնեց, որ Հայկազեանի շրջափակին մէջ նմանօրինակ հանդիպում հայկական վարժարանէ մը այսքան թիւով աւարտական դասարանի աշակերտներու հետ, առաջին անգամն է որ կը կայանայ իր նախագահական տարիներու ընթացքին 2002-էն ի վեր: Դոկտ. Հայտոսթեան



շնորհակալութիւն յայտնեց պրն. Գարատաղեանին եւ բարձր գնահատեց Ս. Խաչ - Հարպոյեան Բարձրագոյն Վարժարանի եւ Հայկազեան Համալսարանի համագործակցութիւնը: Ապա ան պատմական ակնարկ մը տուաւ համալսարանին մասին: Իր կարգին պրն. Գարատաղեան հակիրճ ելոյթով մը հանդէս եկաւ, շնորհակալութիւն յայտնեց համալսարանի նախագահ Դոկտ. Հայտոսթեանին ու տարբեր բաժանմունքներու տնօրէններուն եւ պատասխանատուներուն, որոնք սիրայօժար ընդառաջեցին յատուկ ընդունելութեան գաղափարին, առաջնորդելու համար հայ աշակերտները սփիւռքի միակ հայկական համալսարանը, որ եւս լաւագոյններէն է: Ելոյթի աւարտին պրն. Գարատաղեան աշակերտներուն խորհուրդ տուաւ իրենց բարձրագոյն ուսման վերաբերեալ բոլոր հարցումները ուղղելու՝ յստակ տեսլական ունենալու համար: Դիմաւորման արարողութենէն ետք աշակերտները առիթ ունեցան հանդիպելու Առեւտրական



եւ Տնտեսագիտութեան Բաժանմունքի տնօրէն Դոկտ. Ֆատի Ասրաուիի հետ, Արուեստի եւ Գիտութեան Բաժանմունքի տնօրէն՝ Դոկտ. Արտա Էքմէքճիի հետ, Աշակերտական Կեանքի Գրասենեակի պատասխանատու Պրն. Ռազմիկ Գաբրիէլեանի հետ, եւ Նիւթական Օժանդակութեան ու Կրթանպաստներու Գրասենեակի պատասխանատու տիկ. Գարինա Մուշոյեան Ալ Հաժի հետ. բոլորին հետ առիթ ունեցան հարցազրոյց ունենալու:

Աշակերտները հնարաւորութիւն ունեցան նաեւ այցելելու Մաթոսեան Պատկերասրահը, գրադարանները, պարտեզը, ճաշարանը եւ համալսարանի ընդունելութեան գրասենեակը եւ նոյնիսկ առիթ ունեցան մասնակցելու տարբեր ուսանողական ակումբներու կողմէ կազմակերպուած զուարճալի

միջոցառումներու, որոնք տեղի կ'ունենային համալսարանին շրջափակէն ներս: Հաճեցի հանդիպումներ տեղի ունեցան նաեւ վարժարանէ շրջանաւարտ, ներկայիս Հայկազեան յաճախող ուսանողներու եւ այցելու աշակերտներուն միջեւ, որոնք լաւ առիթ ստեղծեցին կիսելու որոշ խորհուրդներ եւ փորձառութիւններ:



Ս. Խաչ - Հարպոյեան Բարձրագոյն Վարժարանի տնօրէնութեան անունով շնորհակալութիւն կը յայտնենք Հայկազեան Համալսարանին ջերմ ընդունելութեան համար: Յատուկ շնորհակալութիւն օրհորդ Նաթալի Թաքաճեանին, որ կանգնած էր այս իւրայատուկ ու օգտաշատ օրուան յաջողութեան ետին:

Լրատուական Գրասենեակ
Հայ Կաթողիկէ Ս. Խաչ –
Հարպոյեան
Բարձր. Վարժարանի



Առողջապահական

Գիտնականները Կը Հերքեն Քորոնա Ժահրի Ախտանշաններէն Մէկը

Այսպէս կոչուած «քովիտային ոտքի մատները» կրնան իրականութեան մէջ կապ չունենալ քորոնա ժահրին հետ: Այս եզրակացութեան յանգած են Ամերիկայի Միացեալ Նահանգներու Քոնցրէթիքըթի Եյի համալսարանի մասնագէտները: Անոնց հետազոտութեան արդիւնքները ներկայացուած են PNAS ամսագրին մէջ:

Գիտնականները ուսումնասիրած են քորոնա ժահրային վարակի կասկածով 23 անձերու տուեալները, ինչպէս նաեւ «քովիտային ոտքի մատներու» վերաբերեալ գանգատները: Սակայն հիւանդութիւնը հաստատուած է միայն 3 հիւանդի մօտ: Մասնագէտները կը կարծեն, որ ոտքի մատներու հետ կապուած

խնդիրներու իրական պատճառը այն է, որ շատ մարդիկ համավարակի ժամանակ մնացած են տունը եւ չեն հագած գուլպաներ եւ կօշիկներ: Նախապէս գիտնականները կ'ենթադրէին, որ մանիշակագոյն մատները եւ «կեղծ ցրտահարութեան» ախտանշանները կը յայտնուին ժահրին դէմ դիմադրողական համակարգի «աքթիվ» պայքարին պատճառով:

Նոր հետազոտութեան հեղինակները ընդգծած են, որ իրենք չեն կրնար ամբողջութեամբ բացառել SARS-CoV-2-ի նկատմամբ դիմադրողական պատասխանը, սակայն կը կարծեն, որ «քովիտային մատներու» ծագումը ունի որոշ անուղղակի պատճառներ:

Covid-19-ն Կրնայ Յանգեցնել Մահացու Հիւանդութեան

COVID-19-ն կրնայ յանգեցնել թոքախտի զարգացման՝ այն հիւանդներու պարագային, որոնք յարուցիչի կրողներ են: Այսպիսի կարծիք յայտնած է փրոֆեսոր, առողջապահութեան նախարարութեան գլխաւոր մասնագէտ, թոքաբան Իրինա Վասիլեւա: Մասնագէտին խօսքով՝ ինչպէս COVID-19-ի, այնպէս ալ թոքախտի «թիրախը» հիւանդի թոքերն են, ուրեմն COVID-19-ն կրնայ մինչ այդ հիւանդին մօտ եղած թոքախտային մահացու վարակը արթնցնել: Միեւնոյն ժամանակ, երկու հիւանդութիւններու ախտանշաններուն նմանութեան պատճառով, այս մահացու հիւանդութիւնը չյայտնաբերելու վտանգ կայ:

«Բժիշկներու խնդիրն է ուշադրութիւն դարձնել թոքախտի պատճառով թոքերու փոփոխութիւններու պարագան, որոնք երբեմն սխալմամբ կը մեկնաբանուին իբրեւ քորոնա ժահրի դրսեւորումներ», - ըսած է մասնագէտը:

Վիճակագրութեան համաձայն՝ 10 անձէն 8-ն թոքախտի յարուցիչի կրող է, սակայն հիւանդութիւնը «աքթիվ» փուլ կ'անցնի միայն այն ժամանակ, երբ դիմադրողականութիւնը կտրուկ կ'իջնէ: Վարակումի պահէն մինչեւ հիւանդութեան աշխուժացումը կրնայ մէկ տարի, կրնայ 60 տարի անցնիլ, միեւնոյն ժամանակ՝ նոյնիսկ զօրաւոր «սթրես»ը կրնայ խթան հանդիսանալ:

Afnil.com

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՒՆՏԻ ՕՐ

Նախագահութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Կիրակի, 3 Ապրիլ 2022-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Անթիլիասի Ուխտի օրուան առիթով, Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, պիտի մատուցուի Ս. եւ Անմահ Պատարագ:

Պիտի պատարագէ ու քարոզէ
ԳԵՐՇ. Տ. ԿՈՍԻՏԱՍ ԱՐՔ. ՕՅԱՆԵԱՆ

Ս. Պատարագի աւարտին, Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ, մեր հաւատքի հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջով տեղի պիտի ունենայ աւանդական թափօր եւ պիտի կատարուի ջրօրինէք:

Եկեղեցական արարողութեան աւարտին, Ս. Աջը պիտի տեղադրուի Ս. Խորանին բեմին վրայ եւ հոն պիտի մնայ մինչեւ իրիկուան ժամը 07:00: Հաւատացեալներ հերթաբար մօտենալով պիտի կարողանան ստանալ մեր հաւատի հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին Աջին օրհնութիւնը, ինչպէս նաեւ օրհնուած ջուր:

Իսկ Շաբաթ, 2 Ապրիլ 2022-ի երեկոյեան ժամը 07:00-ին Անթիլիաս ուխտի օրուան առիթով տեղի պիտի ունենայ հսկումի արարողութիւն, նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին եւ մասնակցութեամբ միաբան հայրերուն ու Դպրեվանքի ուսանողներուն:

Թագաժահիրին (Coronavirus) ստեղծած պայմաններուն պարտադրանքով եւ մեր ժողովուրդին առողջապահութեան նկատմամբ մեր ունեցած նախանձախնդրութենէն մեկնելով, թելադրելի է որ յարգուին ժահրէն ապահով մնալու նախապայմանները:

ԴԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի Ազգային Արխիւը՝ Մէկդարեայ Յոբելեանին Ընդառաջ

Սկիզբը Էջ 02

Աւելի քան 200 միլիոն դրամի ներդրման շնորհիւ՝ Արխիւը համալրուած է վերջին սերունդի թուայնացման սարքերով ու սըրվըրներով, փոխուած են հակահրդեհային համակարգը եւ պահօցներու ջերմային սարքերը, ներդրուած են ելեկտրոնային հարցումներու համակարգը եւ մէկ պատուհանի սկզբունքը, դիւրացուած է ուսումնասիրողներու սպասարկման գործընթացը, լայնօրէն կ'իրականացուի արխիւային հաւաքածուի հանրահռչակումը ընկերային ցանցերու (Facebook, Instagram, Twitter) մէջ, կը գործէ Հայաստանի Ազգային արխիւի Youtube-եան ալիքը, կը վերագործարկուի Հայաստանի Ազգային արխիւի նորացուած կայքէջը, ջանքեր կը գործադրուին արխիւային ծառայութիւններու (յատկապէս վերջին տարիներուն մեծ հետաքրքրութիւն վայելող տոհմաճառերու կազմման, փաստաթուղթերու բարձրորակ պատճեններու տրամադրման) ներկայացման եւ ընդլայնման ուղղութեամբ:

Տոհմագրութեան կազմումը յիշողութեան առարկայացումն է, ինչպէս նաեւ յարգանքի մատուցում՝ մեր նախնիներուն ու մեր ծագման: Ատիկա կ'օգնէ սերունդներու աչքին առջեւ ունենալ սեփական տոհմի պատմութիւնը, անոնց դաստիարակել հայ ինքնութեան ոգիով: Հայաստանի Ազգային արխիւին մէջ կը պահպանուին 18-րդ դարու եւ 20-րդ դարու առաջին քառորդին մէջ կազմուած աշխարհագրեր, Հայ առաքելական եկեղեցւոյ չափաբերական մատեաններ, վիճակագրական քարտեր ու գիւղատնտեսական տնաթերթիկներ, որոնք կ'օգտագործուին տոհմագրութեան աշխատանքներուն մէջ:

Պետական արխիւային ծառայութեան աշխատանքը պէտք է նպաստէ երկրին մէջ անկախ պետականութեան կայացման ու ամրապնդման գործին, սերունդներուն ժողովուրդի անցեալի համար հպարտութեան, ներկային՝ նուիրումի եւ ապագային՝ հաւատքի ոգիով դաստիարակելու վեհ նպատակներուն, օգնէ ծառացած համապետական ու համազգային խնդիրներու լուծման:

Այսօր Հայաստանի Ազգային արխիւը իր աշխատանքային ոչ մեծ խումբով եւ արհեստավարժ յագեցուածութեամբ պատրաստակամօրէն լծուած է արխիւային հարուստ հաւաքածուն գիտական հանրութեան եւ աշխարհասփիւռ հայրութեան հասանելի, այդ հաւաքածուի համալրման հաղորդակից դարձնելու, ինչպէս նաեւ արտերկրի մէջ անկախ հանրահռչակելու եւ յաւուր պատշաճի ներկայացնելու եւ, ի հարկէ, իրենց տոհմի պատմութիւնը վերհանելու եւ ստեղծելու գործընթացներուն:

«ՇԵՆ ՄՆԱՔ , ՊԱՅԾԱՌ ՄՆԱՔ...»

ԿԱՐՕ ՊՕՅՃԱԼԵԱՆ

Այն օրերուն, քոյրս, եղբայրս եւ ես, ամեն Կիրակի առաւօտ քալելով մեր տունէն

Գահիրէի Պէյն Էլ Սուրէյն թաղի Սուրբ Աստուածածին եկեղեցին կ'երթայինք:

Հեռու չէր եկեղեցին: Բայց ճամբան շարա'ա Էլ Կէշի մուտքէն քիչ մը անդին, կը շեղէինք մեր ուղղութիւնէն, կը մտնէինք դասընկերոջս՝ Աստիկ Սիրունեանի բնակած տան ետեւի փողոցը, եւ հոն, կապոյտ փեղկերով շաքարավաճառի խանութ մը արիստա կը գնէինք:

Ներսը ընդարձակ չէր, բայց ապրանքներ շատ կային, եւ փայտե դարակներու վրայ, ամեն տեսակ գունաւոր շաքարներով լեցուն, ապակի գիրուկ շիշեր քով քովի շարուած կ'ըլլային...

Խանութայանը մեզ լաւ կ'ընդունէր:

Փողոցին նայող երկու խոշոր պատուհաններու ետեւ, մարմարե սեղանի մը վրայ ան կը բանար արիստաով լեցուն շիշերէն մէկուն բերանը, ու զանազան ձեւերով փոքրիկ կիներու, կենդանիներու եւ մարդերու սեւ արծանիկներ, թուղթ պզտիկ տոպրակի մը մէջ կը պարպէր:

Մենք Սուրբ Աստուածածին եկեղեցին դարաց դասին մաս կը կազմէինք, եւ լսած էինք որ արիստաը ձայն կը գտեր եւ կ'աղուորցներ անոր հնչիւնը:

Տարիներով մասնակցած էինք եկեղեցւոյ երգեցողութիւններուն, ու ես բոլոր շարականները եւ արարողութիւնները այլեւս գոց սորված էի:

Մեր դպրապետը Պոլսեցի Լեւոն Սիրունեանն էր, Եգիպտոսի առաջնորդ Մամբրէ արք. Սիրունեանին եղբայրը:

Երգած ժամանակ ես կը տեսնէի եկեղեցիին նաւը, անոր երկու կողմի պատերու իւրաքանչիւրին վրայ բացուած հինգ կամ վեց վանդակապատ խոշոր պատուհանները ու գաւիթէն դաս յառաջացող գետնի բաւական մաշած եւ գոյնը նետած կարմիր գորգը:

Նոր չէր եկեղեցին: Ան շինուած էր 1800ական թուականներու կեսերուն, այն ատենուայ կարեւոր թաղերէն Պէյն Էլ Սուրէյի մէջ: Բայց տարիներու հողովոյթին հետ փոխուած էին լաւ ժամանակները եւ թաղին փայլն ու շքեղութիւնը մնացած էին փոշիներու մէջ: Անցած էին նաեւ Սուրբ Աստուածածնի փառքի օրերը, եւ ան նոր սերունդին համար այլեւս դարձած էր հին եւ անկարելոյ:

Անոր փայտե բարձր ձեղունին տակ կնուկներու եւ հարսնիքներու ուրախ արարողութիւններ չէին կատարուեր այլեւս:

Շատեր կը նախընտրէին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ նոր եւ գեղեցիկ մայր եկեղեցին:

Բայց Սուրբ Աստուածածնի մէջ ըստած աղօթքներն ալ, ուրիշ տեղերու չափ սուրբ էին, եւ անոր հին ու սրբատաշ քարերն ու պատերը, տարիներով ծծած էին երկինք բարձրացող շատ հոգեշունչ խնդրանքներ, եւ վառած մոմերու լոյսեր ...

Եկեղեցին լուսաւոր էր:



Պատարագի կեսերուն, երբ արեւը երկինքին վրայ բարձրացած կ'ըլլար եւ սարկաւազը բուրվառով խորանը եւ դասը կը խնկարկէր, պատուհանէն ներս թափանցող արեւի սիւնակ մը եկեղեցին երկնքին կը կապէր եւ ներսի աղօթքները Աստուծոյ կը հասցնէր...

Ես կը սիրէի խորանի կողմէն եկած խունկի քուկները շնչել, բուրվառին եւ քշոցներուն ձայնը լսել, եւ հոն երգուած Հաւատամքին մտքով ընկերանալ:

Կը սիրէի նաեւ դասին մէջ մեր երգած Սուրբ Սուրբը, եւ եղանակի արեւելեան դարձուածքներով ինծի շատ հաճելի Տէր Ողորմեան:

Դասէն անդին, ամեն Կիրակի նաւուն մէջ կը տեսնէի թաղէն եղող ութը կամ տասը պառաւ մամիկներ, որոնք նստարաններուն առջեւ կանուխէն տեղ գրաւած կ'ըլլային: Աւելի ուշ եօթ կամ ութ ուրիշ հաւատացեալներ ալ կու գային:

Պատուհանի լոյսին տակ ես դեռ կը տեսնէի կլոր եւ փայլուն ակնոցներով պրն Արամ Մովսէսեանը: Ան միշտ կը հագուէր սրճագոյն եւ գծաւոր զգեստ մը, ու բարեպաշտի կեղծ երեւոյթով, ոտքի կը հետեւէր արարողութեան:

Ես առաջին մէկ օրէն չէի համակրած իրեն: Անձնապէս խնդիր չէի ունեցած հետը բայց գիտէի եւ լսած ալ էի մանաւանդ, որ փառատեսչ էր եւ նենգամիտ: Իրմէ քիչ անդին, գաւիթի եւ նաւի սահմաններուն վրայ, ամեն Կիրակի բաց ափերը երկինք դարձուցած, կ'աղօթէր Ս. Աստուածածին եկեղեցւոյ յաղթանդամ հոգաբարձու պրն Պետրոսը: Ան սովորաբար բանկալին մէջ կը մնար, եւ մոմերու վաճառքին կը հսկէր, բայց երբեմն, պարապ ժամերուն եկեղեցի կը մտնէր, ու նաւի մուտքին՝ հեռուէն կ'ընկերանար մեր երգերուն:

Իր զօրաւոր ու բամբ ձայնը կը խառնուէր մերիններուն, եւ երգեցողութիւնը տարբեր ձեւով, ճիւղ ու հմայիչ կը դառնար ներկաներուն:

Բայց պրն Պետրոսին գործունեւութեան գլխաւոր դաշտը, եկեղեցիէն դուրս գտնուող բանկալին մէջ էր: Հոն , պատարագէն վերջ տուն դարձողներուն մաս կը բաժնէր, եւ կլոր ափսէի մը առջեւ կեցած՝ թաւ ձայնով շարունակ - Շէն մնաք, պայծա՛ռ մնաք աղքատներուն պնակը անտես մի՛առնէք, կը պոռար:

- Այդ ձայնը, աղքատներուն պնակը անտես առնողներու ետեւէն գրեթէ մինչեւ փողոց կը հասնէր, ու դժուար էր չլսել ձեւացնել...

Իսկ հոգաբարձու Պետրոսը ափսէին առջեւ կեցած սրտաբուխ նուերի կը սպասէր...

Շար. Էջ 08

Նամակ Ամերիկայէն – 21 –

Քաղաքական Թնճուկներ Կարելի ՉԷ ՉԵՆՔԻ Ուժով Լուծել

Սկիզբը Էջ 03

Միւս կողմէ փորձեց տարիամոգել Զրեմիլը, թէ Զիւլի անդամակցութիւնը մօտակայ հեռանկարներ չի պարզեր: Ռուսիոյ սահմանակից Ուքրանիոյ Տոնպաս եւ Լուհացք շրջաններուն որոշ մէկ հատուածներ որոնք 2014էն ի վեր անջատողականներուն հսկողութեան տակ կը գտնուէին, անընդհատ ուքրանական բանակին կողմէ կը թիրախաւորուէին, խլելով՝ մարդկային զոհեր:

Նախագահ Փութինի Ուքրանիոյ դէմ շղթայազերծուած պատերազմը, իր իսկ յայտարարութիւններով, կը միտի Ուքրանիան ապագինեալ եւ չեզոք երկիր մը դարձնել ուր օտար զինուորական ներկայութիւն գոյութիւն պիտի չունենայ, ինչպէս նաեւ Զիւլի պարտադրել միանգամ ընդմիշտ հրաժարիլ որեւէ զինուորական ուժստի մը մասնակցելու յաւակնոտութիւնէ: Առաւել ըլլալով, Զրեմիլը չէ ծածկած իր մտադրութիւնը Զիւլի պարտադրելու պաշտօնական ճանաչում շնորհել խրիմին՝ իբրեւ ռուսական դաշնակցութիւն մաս կազմող

հողաշերտ եւ Տոնպասն ու Լուհացքը կցել Ռուսիոյ:

Փետրուար 24-ի ռուսական բանակին Ուքրանիա ներթափանցումը, արեւմտեան զինուորական մասնագետներու գնահատումով, ընդհուպ յաղթանակի մը Փութինի ակնկալութիւնները ցարդ ի դերեւ հանած: Երեւոյթներէն դատելով, ռուսական բանակը շաքաթներու թաւայքին հետ մարդկային եւ զինուորական կազմաճներու ծանր կորուստներ կ'արձանագրէ: Զիւլի շուրջ ռուսական զօրքերուն հաստատած օդակը սկսած է թուլանալ: Միւս կողմէ, Ազովի լիճին եւ Ուքրանիոյ սեւ ծովու շրջանը, Օտեսայէն ի բացառեալ, ռուսական հսկողութեան տակ կը գտնուի:

Չինարուլի մը հեռանկարները կը մնան թեական: Այնքան ատեն երբ Միացեալ Արեւմուտքը մեծածաւալ արդիական զէնքեր կը հայթայթէ Զիւլին, որուն շնորհիւ Ուքրանական ուժերը համեստ յաջողութիւններ կ'արձանագրեն, նախագահ Չելենսքին կը ձեւացնէ անգիշող ըլլալ:

Բովանդակ արեւմուտքի հայեացքը այսօր կեդրոնացած է Ուքրանիոյ վրայ: Ռուս Արտաքին գործոց Վեթերան Նախարար Սերկէյ Լաւրովի բառերով, «Արեւմուտքը մեզ ծունկի կ'ուզէ բերել. կործանել»: Յարձակելով Ուքրանիոյ վրայ, նախագահ Փութին այդ դժոխքին դռները լայն բացաւ արեւմուտքին առջեւ: Այս պահուն, մեր մոլորակին բոլոր մեղքերը փաթեւած են Վլադիմիր Փութինի վիզին: Նախագահ Պայտըն Լեհաստան իր կատարած այցելութեան ընթացքին հազիւ քանի մը օրեր առաջ ծանր բառեր գործածեց ռուս նախագահին դէմ եւ պաշտօնական ճառ մը արտասանելով ան շեշտեց թէ «Փութինը իշխանութեան վրայ պէտք չէ մնայ»:

Նիւ Եորք - ԱՄՆ

Տեսակետ

Ուրբայինա եւ Ռչ Միայն

ԱՐՄԵՆ ՅՈՎԱԵՓԵԱՆ

Նախքան Ռուսաստանի յարձակումը Ուրբայինա, Փուլինն ու Ռուսաստանն ընդհանրապես մեծ հաշուով սպառնալիք չէին ԱՄՆ-ի համար: Պայտընի իշխանութեանն ու սպառնալիքն ընդհանրապես պատճառ էր պետք, եւ արտաքին պատճառ էր պետք, որպէսզի կարողանան մի ամ ժամանակ երկարաձգել իրենց անիմաստ գոյութիւնը:

Ներքին առումով նրանց բոլոր "հնարքները" ազդեցիկ չեղան, քանի որ վերջացած ու հնացած ոճ էր: Միացեալ Նահանգներում ռէյսիզմի/ցեղապաշտութեան վտանգ "սարքելը", շատ շուտ կորցրեց իր ազդեցութիւնը, ու նրանց համար մնաց միայն մի ելք.- **Աշխարհում ստեղծել թշնամի**, որի "վտանգը" նկատի ունենալով՝ կարողանան միասնական դարձրել ամերիկացիներին, իրենց յայտարարեն ընդհանրապէս եւ ազատութիւնների ջատագով եւ արդարացնեն արտաքին "նոր", բայց իրականում, հին եւ նախապիւն բուրոյ՝ ծանօթ, քաղաքականութիւնը: Այս է պատահում հիմա "Ուրբայինական հարց"ի կապակցութեամբ: **Պայտընը ընդհանրապէս հին թելի "գոյութիւնը" երկարացնելու համար՝ արտաքին ոլորտում կտրուկ քայլերի կը դիմի ու կը խառնի աշխարհը:**

Ու պատահական չէր, որ ՆԱԹՕ-ի գագաթաժողովին Պայտընը ասաց միայն մի խօսք.- **"ՆԱԹՕ-ն միւսեւ հիմա այսքան միասնական չի եղել":** ԶԷ՝ որ արդէն լուրեր կային, որ Ֆրանսիայի նախագահութեան ընտրութիւններում տիկին Պենի յաղթելու դէպքում՝ Ֆրանսիան դուրս էր գալու ՆԱԹՕ-ից, ու Ֆրանսիային հաւանաբար հետեւելու էին ուրիշ երկրներ: Իսկ հիմա ՆԱԹՕ-ն որոշեց ուժեղացնել իր ներկայութիւնը Եւրոպայի արեւելքում: Ուրբայինայի կապակցութեամբ էլ մի քանի կարեւոր որոշումներ տուեց՝ զենք ու զինամթերք ուղարկելու Ուրբայինայի իշխանութիւններին:

Միացեալ Նահանգներում մեծ շրջանառութեան մէջ է դրուել ամերիկացի կարկառուն քաղաքական դէմքերից, հմուտ դիւանագետ ու վերլուծաբան՝ արդէն վախճանուած **Հենրի Զիսինճրի Նամակը, որ նա գրել էր 2014 թուականին՝ ՆԱԹՕ-ին Ուրբայինայի անդամակցութեան հարցով:** ՆԱԹՕ-ն 2008 թուականին որոշում ընդունեց քայլ առ քայլ անդամ դարձնել Վրաստանն ու Ուրբայինան: Նոյն տարի, Ռուսաստանը ներխուժեց Վրաստան ու ճանաչեց Աբխազիայի ու Հարաւային Օսեթիայի անկախութիւնը:

Ուրբայինայի պարագայում դէպքերը ուրիշ ընթացք ստացան: 2015 թուականի "մայտանով" իշխանութեան եկան նորերը, որոնք կտրուկ հակառակ քաղաքականութիւն որդեգրեցին: Գուցէ հետաքրքիր լինի մի իմանալ որ՝ նրանց իշխանութեան գալուց յետոյ միւսեւ այս պատերազմը Ուրբայինայի արեւելքում անկախութիւն յայտարարած երկու շրջանում, ռազմական գործողութիւնների հետեւանքով մահացել են 1000-ից ավել մանուկներ: Ամբողջ թիւը չկարողացայ ձեռք բերել, բայց հենց այս մէկ տուեալի հիման վրայ՝ կար եւ գոյութիւն ունի Տոնպատում ցեղային մաքրագործումների իրական վտանգը:



Բայց ի՞նչ էր գրել Զիսինճրը՝ 2014 թուականի իր Նամակում: Ամբողջը առցանց հասանելի է: **Զիսինճրը կտրուկ դէմ էր գնացել Ուրբայինան ՆԱԹՕ-ի անդամ դարձնելու սկսած գործընթացին՝** նշելով որ դա կը խախտի համաշխարհային խաղաղութիւնն ու ուժերի ներկայ հաւասարակշռութիւնը՝ ինչը ունենալուն է աղետալի հետեւանքներ: **Եւ ինչքան ճիշտ էր Զիսինճրի նախատեսութիւնն ու ահագանգը:** Զիսինճրը ընդհանրապէս էր, ու հիմա ԱՄՆ-ում տարբեր վերլուծաբաններ, որոնք մեծ կշիռ ունեն երկրի արտաքին քաղաքականութիւնը ձեւաւորելու գործում, կրկնում են նոյն տեսակետը ու քննադատում են Պայտընի իշխանութեանը: Կը վերլուծաբանները հիմնականում ընդհանրապէս են: Սա մի կարեւոր տեղեկութիւն է, որ պիտի իմանան քաղաքական հարցերով հետաքրքրուողները: Մի ճիշտ գնահատական, որը **ՎԵՐՋԱՊԵՍ հասկացաւ** հենց Ուրբայինայի ցեղապաշտ, ՆԵՕ-նացի նախագահ իրեայ Չեւենսկին... Բայց, հիմա ի՞նչ օգուտ... Իր անխոհեմ որոշումներով ու գործերով՝ Ուրբայինայի արեւելքն ու հիւսիսը աներակ դարձնելուց յետոյ: Եւ այս արհաւիրքը սպասում է ողջ Ուրբայինային:

(Արդէն լեհերի ախորժակն է բացուել: Նրանք ուզում են ՆԱԹՕ-ի խաղաղապահ ուժերի դրօշի ներքոյ՝ իրենց ուժերը մտցնեն Ուրբայինայի լեհաբնակ Գալիցիա: Լեհերը Գալիցիան իրենց պատմական հայրենիքն են իմանում):

Կարծում եմ, աշխարհը ճիշտ կանի չնտառու միայն Ռուսաստանի տնտեսական անկումով (դա մեծ հաւանականութեամբ երկար չի լինելու): Միացեալ Նահանգներն ու Եւրոպան՝ առաջին հերթին, թող մտածեն իրենց տնտեսական վիճակով: Ես չեմ կարողանում նոր տուեալներ ձեռք բերել ԱՄՆ-ում գնաճի տոկոսների մասին: Պաշտօնական վերջին վիճակագրութիւնը դա համարեց մօտ 8 տոկոս՝ երկու ամսուայ ընթացքում, բայց երեւոյթներից դատելով՝ գնաճը շատ ավելին է: Տեսնելով այն ահաւոր գնաճը, որ կայ հիմա ողջ Միացեալ Նահանգներում, եւ, ըստ երեւոյթի, դրա կասեցուցելու կամ նահանջի նախանշանները չկան (Արդէն Պայտընն նշեց մօտաւորապէս նոր թանկացումների մասին, ու դրա մեղաւորը համարեց Փուլինին...), ինձ թւում է, որ աշխարհն է գնում դեպի նոր անկում ոչ միայն տնտեսութեան ոլորտում:

Եւ ո՞րն է այս հարցերի հիմնական լուծումը: Հիմնական լուծումը Միացեալ Նահանգներում իշխանափոխութեամբ է պայմանաւորուած: **Շար. Էջ 08**

ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Ե ինձ մի վարդ. ունի բոյր այն, այլ եւ շո՛ւնչ. Փըթթի այգուն, երեկոյին ոչ խամրի. Արփոյն ներքեւ շողայ հանգոյն գոհարի. Ծաղիկ մի՛ակ, այլ եւ է նա ծաղկանց փունջ:

Երկինք ըզվարդն ինձ ձօնեցին այն անմահ. Դու զանդրանիկ ձօնես ինձ վարդ Մայիսի: Բերանդ է լուռ, բարձրաձայն սիրտ քո խօսի. «Պահէ՛ գիմ վարդ. քոյինն առ քեզ տացէ՛ մահ»:

Որ մեռանի սիրով, ո՞չ կեայ յաւիտեան. Տապաւնագիրն ո՞չ մըշտաբաց է մատեան...: Ընծայես այժմ ինձ վարդ ցամաք, այլ յորժամ

Փակուին աչք իմ վարդից, աստեղց լուսատուք, Յորժամ հիւծիմ, ի հող մըտնեմ տարածամ, Պիտի ձօնես ինձ վարդ ցողեա՛լ արտասուք...:

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ

31 2022
ՄԱՐՏ

Կրկ Երկ Երեք Չորք Հնգ Ուրբ Շբթ

		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30	31		



ՍԵՂԻՎԱ ԱՌԱՔԵԼԵԱՆ
(1884 – 1942)

«Փուլինը հայկական գիւղին մէջ»

Տեսակետ

Ուրբայինա եւ Ռչ Միայն

Սկիզբը էջ 07

Ու ես համարեա վստահ եմ, դա կը պատահի հենց Դեմոկրատ կուսակցութեան մէջ ձեւաւորուած եւ ամեն օր աւելի համակիրներ շահող նոր թեւի միջոցով: Նկատի ունեցէ՛ք, որ մինչեւ այսօր ԱՄՆ Զոնկրէսը չի վաւերացրել դեմոկրատ նախագահի ներկայացրած տարեկան Պիւտճէն՝ 2022 թուականի կապակցութեամբ, ու շուտով Ապրիլ ամիսն է: Զոնկրէսը չի վաւերացնում ոչ-մի նախագիծ (բացի Ուրբայինային աջակցութեան գումարը. աւելի քան 13 միլիարդ տոլար):

Դեմոկրատ Զոնկրէսը հիմա զբաղուած է ԱՄՆ Գերագոյն ատենախօսակցութեան մի անդամին փոխարինողի արժանաւորութեան քննարկարարութեամբ: Նրան Զոնկրէս եւ հրաւիրել՝ պատասխանելու հարցումներին: Պայտըընը որոշեց իր թեկնածուին՝ 8 սենատոր քանակ միջոց: Ես կարծում եմ նա կը ստանայ Զոնկրէսի հաւանութիւնը: Եթէ անգամ Սենատի դեմոկրատ անդամները դէմ լինեն ու դէմ քուէարկեն ներկայացուած թեկնածուին, ամերիկեան լրատուները դա կը ներկայացնեն, որպէս կանանց ու սեւամորթների դէմ նոր արշաւ: Ուստի, այս փակուղին նկատի ունենալով՝ ներկայացուած դատաւորը կստանայ դրական քուէ: Այդուհանդերձ չի փոխուելու Դատական Գերագոյն ատենախօսակցութեան յարաբերութիւնը՝ 6 հանրապետական եւ 3 դեմոկրատ դատաւոր:

Աշխարհում շատ հարցերի լուծումը Միացեալ Նահանգներում իշխանափոխութեամբ է պայմանաւորուած: Ու դա կը պատահի, եթէ համաշխարհային վտանգաւոր ուժի վերածուած՝ դեմոկրատների սպառնալիքը թելը աշխարհը չտանի համաշխարհային նոր ցնցումների՝ իր անխմատ գոյութիւնը երկարաձգելու համար:

Աշխարհում տնտեսական նոր համակարգ է ձեւաւորուում: Դոլարը ժամանակի ընթացքում աւելի նահանջելու է, եւ հաւասար արժէք եւ ստանալու չինական ենը, ամերիկան դոլարն ու ժողովրդային ժողովրդը: Ռուսաստանն արդէն յայտարարեց, որ մի շարք երկրներին գազ մատակարարելու գումարը ստանալու է ժողովրդով: Այս ընթացքը շարունակական է լինելու ու **տնտեսական նոր կարգը քաղաքական նոր պայմաններ ու հասարակարգ կը պարտադրի աշխարհին:** Այդ առաջընթացը անխուսափելի է, ու ոչ-մի Պայտընն ու սպառնալիք դեմոկրատ ԶԻ ԿԱՐՈՂ խանգարել պատմութեան հոլովոյթն ու առաջընթացը:

Պայտընը պայմանաւորուել է Ռուսաստանի հետ ուրիշ երկրների մասով: Հայաստանն էլ դառնալու է Միութենական Պետութեան անդամ. ինչպէս Ազրայէճանն ու Վրաստանը՝ յետագայում: Այստեղ էլ **ոչ-մի Տիգրան-Խզմալեան ԶԻ ԿԱՐՈՂ ազդեցիկ գործօն լինել եւ անպատասխանատու յայտարարութեամբ վտանգել Հայաստանի եւ Արցախի գոյութիւնը:** Նա իր վերջին հարցազրոյցում ասաց, - **Մենք կը գնանք մինչեւ վերջ...** Ախր, ճանըմ, դու եւ քո Եւրոպական կուսակցութիւնը ի՞նչ ուժ էք ներկայացնում որ: Ուրբայինան աչքի առաջ ունեցիր, որի բնակչութիւնը մօտ 15 անգամ աւելին է Հայաստանից, տարածքը՝ Եւրոպայում ամենամեծն է, ու չիօսենք Նրանց միջ-պատերազմ տնտեսութեան մասին:

Տիգրան Խզմալեանը խօսեց, որ Հայաստանը պիտի ապաւինի աշխարհի առաջադէմ ուժերին, ու Նրանց համարեք Եւրոպան ու Միացեալ Նահանգները: Ես մարդը կամ կոյր է, կամ պարզապէս գործակալ: Այդ առաջադէմները ծպտուն չհանեցին, երբ Ադրբեջանը քիմիական զէնք օգտուեց 44-օրեայ պատերազմում, աշխարհը չիմացաւ Արցախի աւերուած գիւղերի, քաղաքների ու տեղահանուածների մասին: **Ու ես նկատում եմ Հայաստանում պայթել է "առաջադէմ ուժերի" փչած փուչիկը...** Այդ առաջադէմները Դեմոկրատ կուսակցութեան հին թելը չէ: Ինչքան էլ պնդեն ու գեղեցիկ փաթեթով ներկայացնեն այդ "առաջադէմ գաղափարները", էլ օգուտ չունի: **Բարոյապէս ու գաղափարապէս պարտուել են նման ուժերը:** Ու դա լաւ է, շատ լաւ է:

* * *

Դեմոկրատ Միացեալ Նահանգներում գրաքննութեան են ենթարկում ոչ միայն Հանրապետական կուսակցութեան կապուող լուրերը, այլ հենց դեմոկրատ Զոնկրէսին վերաբերող լուրերը: ՈՉ ՄԻ ԼՈՒՐ Զոնկրէսի աշխատանքներից՝ յատկապէս տարեկան պիւտճէի հարցով: Ոչ մի լուր ԱՄՆ-Մեքսիքա սահման-նում կուտակուած միլիոնաւոր ապօրինի զաղթականներից: Ոչ մի պաշտօնական հաղորդագրութիւն տնտեսութեան վերաբերեալ:

Յոյս ունեմ այս վիճակը կը շտկուի 2022-ի Զոնկրէսի ընտրութիւններից յետոյ, **եթէ** սպառնալիք դեմոկրատները մինչ այդ աշխարհը չտանեն դէպի նոր աղետների ու ցնցումների:

«Շէն Մաք , Պայծառ Մաք...»

Սկիզբը էջ 06

Բանկալը մեծ էր եւ ներսի մթնոլորտը միշտ տաքուկ կ'ըլլար: Մենք դպիրներս, կը սիրէինք եկեղեցիէն վերջ հոն հաւաքուիլ, եւ սեղանին շուրջ խօսելով հաճելի ժամանակ անցնել:

Յունուար ամսուան պաղ կիրակի մը, խօսակցութիւնները բանկային մէջ վերջացած էին: Պրն Պետրոսը սովորականին պէս կիրակի օրուայ մասը զատելէ վերջ, թուղթէ պզտիկ տոպրակի մը մէջ ինծի նշխար մըն ալ նուէր տուաւ:

Նշխարները միշտ չէին գտնուել:

Երբ տուն հասայ, մասը եւ նշխարը մօրս տուի: Մասը ընտանիքով բաժնուեցանք:

Նշխարը, մայրս համբուրեց եւ տարաւ անկողինիս բարձին տակ պահեց: Երբօրս եւ քրոջս բարձերուն տակ ես արդէն տեսած էի նման նշխարներ: Անոնք կարելորդ էին:

Մայրս նշմարելով որ քովը կեցած՝ ըրածը կը դիտեմ,

- Պահեմ, որպէսզի գիշերները բարի հրեշտակներ գան եւ քեզի անուշ քուն բերեն , - ըսաւ:

Բայց գիշերը անուշ քուն բերող հրեշտակները չեկան: Գոնէ ես չտեսայ անոնց գալը...

Գլուխս բարձիս վրայ դրած, անոնց փոխարէն տեսայ միայն մայրս, որ հրեշտակի չափ բարի, իր կեանքի ամբողջ քունը սիրով նուիրեց որպէսզի մէրը ըլլար անուշ, հանդարտ ու անխռով ...:

Զամփինաս, Պրազիլ



ԹԵՔԵԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ
ԼԻԲԱՆԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՅՈՒԹԻՆ

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ
Շենդեան 125ամեակի Նշում

Տեղի կ'ունենայ Զորքշաբթի 6 Ապրիլ 2022ի, Երեկոյեան
ժամը 7ին, Թեքեան Կեդրոնին մէջ, Ա. յարկ, Ժըմմեյզի

ՀՐԱԴԵՐ

ՀԱԸՄ-ՇԵՆ



ԱՆԴՐԱՆԻԿ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹԻՆ

ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱԹՈՐՈՒԹԵԱՄԲ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԱՏԱՆ

ՑԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՑ

ՆՈՒԲԻՐՈՒՄՍ

ԱՌՈ ՊԱՊԱՃԱՆԵԱՆԻ ԾՆԱԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

ԲԱՆԱԹՈՒՄ ԼԻԲԱՆԱՆԻ ՖԻԼԶԱՐՄՈՆԻԳ ՆՈՒԲԱԳԱԹՈՒՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ
ԿԱՌՈ ԱԻԵՍԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ ՈՒՐԲԱԹ, 1 ԱՊՐԻԼ, 2022, ԵՐԵԿՈՑԵԱՆ ԺԱՄԸ 8-ԻՆ, ՀԱԸՄ-Ի ՏԵՄԻՐՃԵԱՆ
ԿԵԴՐՈՆԻ Բ. ՅԱՐԿԻ ՄՐԱՇԻՆ ՄԷՋ:

ՀՐԱԴԵՐ